ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳՀ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը, որը գտնվում է ք. Երևան, Բագրևանդի 5 հասցեում, ստորև ներկայացնում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20/4» ծածկագրով ԳՀ ընթացակարգի արդյունքում 10.10.2017թ. կնքված N ԳՀԾՁԲ-20/4-1 գնման Պայմանագրում (այսուհետև՝ Պայմանագիր) 2017թ-ի նոյեմբերի 15-ին կատարված փոփոխության (այսուհետև՝ Փոփոխություն) վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: Փոփոխությունն իրականացվել է՝ հաշվի առնելով մասնակցի գրավոր դիմումը և պատվիրատուի համաձայնությունը:

Փոփոխության նկարագրություն: Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրի գնման և վճարման ժամանակացույցերում կատարել փոփոխություն՝ ըստ սույն Փոփոխությանը կից N 1 և 2 հավելվածների:

Փոփոխության հիմնավորում: Սույն փոփոխություն կատարվում է՝ հիմք ընդունելով Պայմանագրի 7.5 և 7.8 կետերը: Սույն փոփոխությունը չի դասվում ՀՀ օրենսդրությամբ նախատեսված արհեստական փոփոխությունների շարքին:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԳՓՁ վարչության բաժնի առաջատար մասնագետ Գ. Վարդանյանին:

Հեռախոս՝ 010-29-44-18:

Էլ. փոստ՝ g.vardanyan@mil.am:

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ N 1
N ԳՀԾՁԲ-20/4-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան **15 նոյեմբեր 2017թ.**

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ.Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից և «Էլեկտրոն» ԲԲԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ս. Աբրահամյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր՝ հիմք ընդունելով 10.10.2017թ. կնքված N ԳՀԾՁԲ-20/4-1 գնման Պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 և 7.8 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն փոփոխությունը (այսուհետև՝ Փոփոխություն) հետևյալի մասին.

1. Փոփոխության առարկան

1.1 Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրի գնման և վճարման ժամանակացույցերում կատարել փոփոխություն՝ ըստ սույն Փոփոխությանը կից N 1 և N 2 հավելվածների:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Փոփոխությունն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն Փոփոխության մեջ չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները, Ծառայության հանձման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Փոփոխությունը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 3 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն փոփոխությանը կից Հավելված N 1 և N2 հանդիսանում են փոփոխության անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն ք. Երևան Բագրևանդի 5 ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011144079 ՀՎՀՀ 00867405 ՀՀ ՊՆ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏԻ ՊԺԿ	«Էլեկտրոն» ԲԲԸ ք. Երևան, Շարուրի 37 "Արդշինբանկբանկ" ՓԲԸ Շենգավիթի մ/ճ Հ/Հ 2473600088140000 ՀՎՀՀ 01801627 Տնօրեն
Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	Ս. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Հավելված N 1

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ՝ ՍՈՒՅՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ

Հ/Հ	Ծառայության անվանում	Ծառայության գին /ՀՀ դրամ/	Գնման ժամանակացույց
1	Ջենքի համակարգերի վերանորոգման և պահպանման ծառայություններ (Ականորսիչների վերանորոգում) այդ թվում	16 000 000	Ծառայությունների մատուցումը իրականացվելու է 2017թ. 4-րդ եռամսյակում /բայց ոչ ուշ քան 15.12.2017թ/
1	Փոխել տելեսկոպիկ ձողի 4-րդ դիէլեկտրիկ/ ծունկը	6788	
2	Փոխել փնտրիչ էլեմենտի վրայի ռետինե ապահովիչ շրջանակը	2726	
3	Փոխել կամ նորոգել տելեսկոպի ձողը փնտրիչ էլեմենտին ամրացվող դետալները/հասուկ հեղյուս և ձևավոր մանեկ	6500	
4	Փոխել տելեսկոպիկ ձողը փնտրիչ էլեմենտին միացնող կռոնշտեյնը	7300	
5	Փոխել ղեկավարման բլոկին միացնող քոտը (մալոփսը)	8700	
6	Փոխել փնտրող տվիչը	29 203	
7	Փոխել տելեսկոպիկ ձողը	18 128	
8	Փոխել կոտրված կցորդիչը	6968	
9	Փոխել ձայնարկիչ էլեմենտը	4685	
10	Մաքրել ղեկավարման բլոկի կցորդիչների կոնտակտները	3252	
11	Փոխել ղեկավարման բլոկի կցորդիչները	19 507	
12	Ստուգել ղեկավարման բլոկի մեջ գտնվող էլեկտրոլիտիկ կոնդենսատորների ունակությունը, անհրաժեշտության դեպքում փոխել	7054	
13	Փոխել ՊՏԿ .57-5-3 վ փոխանջատիչը	5717	
14	Փոխել A1 բլոկի A1 դիֆերենցիալ ուժեղարարները	54 998	
15	Փոխել ֆունկցիոնալ բլոկի A1 տպասալիկը	150 000	
16	Ներկել ֆունկցիոնալ բլոկը	2815	
17	Ամբողջությամբ փոխել ֆունկցիոնալ բլոկը	320 000	
18	Փոխել ֆունկցիոնալ բլոկում էլեմենտի համար նախատեսված պահունակը	10 000	
19	Հիմնական սնուցման աղբյուրի ձևափոխում	12 000	
20	Պահեստային սնուցման աղբյուրի ձևափոխում, մալուխներով համալրում	32 378	
21	Վերականգնել տեղափոխման ճամպրուկը	16 144	
22	Կոնսերվացնել ականորսիչի հանգույցները տեխնիկական կոնսերվանտով	5029	
23	Փոխել կոտրված փականները	3703	
24	Վերականգնել մետաղական ճամպրուկի ներսի ներդիրները	6392	
25	Քիմիական մշակման ենթարկել ճամպրուկի ներսը և ուսապարկը	7800	
26	Համալրել նորոգված ականորսիչները շահագործման ձեռնարկով	3703	
27	Փոխարինել պատռված ուսապարկը	33 000	
28	Փոխարինել կտրտված ուսագոտին	6500	
29	Համալրել շողափոցը պահեստային մխանով/ասեղ/	2851	
30	Համալրել սարքը աշխատունակության փորձիչով	2735	
31	Խափանված շողափոցի փոխարինում	20 000	
32	Փոխել խափանված ականջակալը	6500	
33	Փոխարինել ականորսիչի սնուցման աղբյուրի կոտրված կցորդիչները	12 000	

ՊԱՏՎԵՐԱՏՈՒ

ԿԱՏԱՐՈՂ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԿ ՊՈԱԿ

1

«Էլեկտրոն» ԲԲԸ
Տնօրեն

Կ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ս. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Հավելված N 2

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ՝ ՍՈՒՅՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ

Հ/Հ	Ծառայության անվանումը	CPV ծածկագիր	Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ. ըստ ամիսների վերոհիշյալ առավելագույն գնի սահմաններում, բայց ոչ ուշ քան 20.12.2017թ	
			նոյեմբեր	դեկտեմբեր
1	Զենքի համակարգերի վերանորոգման և պահպանման ծառայություններ (Ականորսիչների վերանորոգում	50841300/1/4/1	0.0	16 000 000

**Վճարման ենթակա գումարները ներկայացված են առողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Էլեկտրոն» ԲԲԸ
ք. Երևան, Շարուրի 37
"Արդշինբանկբանկ" ՓԲԸ Շենգավիթի մ/ճ
Հ/Հ 2473600088140000
ՀՎՀՀ 01801627
Տնօրեն

Մ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Հ/ա 21 դրդ Ջ. ...
ա/ծ AE 0613880